

միջոց տուեց այս կեանքիս խաւարից աչքս քցելու յաւիտեան-կան կեանքի սրբութիւն սրբոցի վերայ, որ ինձ իւր վարդապետութեամբ մեղքերից ազատելով, տարաւ, բարձրացրեց հառցրեց իսկական ազատութեան, իսկական հոգեւոր կեանք ունենալու: Յիսուսի Քրիստոսի իմ Փրկչիս շնորհովն ու օգնութիւնով ամեն բանի մէջ զօրաւոր եմ, ինչու որ Տէրաջ իօսուը յանդրեան ինայ: Ամէն:

## Գ. Ե. ԱՂՊՈՓԻՒԵԱՆՑ.

## ՀԱՄԱՆԳՂԻԱԿԱԾ ԵԿԵՂԵՑՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ:

Անցեալ ամառը Լոնդոնում տեղի ունեցաւ համանգղիական եկեղեցական ժողովը (Երրորդը), որ կոչվումէ Լամբէտեան, որովհետեւ Լոնդոնի Աղքա-պիսկոպոսի պալատը գտանվում է Լամբէտ թաղում: Յայտնի է որ Անգլիական—եպիսկոպոսական եկեղեցու հետեղները բազմաթիւ են աշխարհիս ամեն մասերում և ամեն ուրեք կան վիճակաւոր եպիսկոպոսներ, որոնք հովուածեն իրանց հօտերը գրեթե անկախ, թէև բարոյապէս ճանաչում են բուն անգղիական եկեղեցին իրեւ իրանց մայր: Անգղիական եպիսկոպոսական եկեղեցու հովիք տեսնելով, որ իրանց անջատեալ գիրքը թուլացնում է եկեղեցու ոյժը պատերազմնուու համար ծագող նոր մոլար վարդապետութեանց և ժողովրդոց մէջ արմատացող չարեաց դէմ, որոշեցին տասն տարին միանգամ ընդհանուր ժողով կազմել և միացեալ ուժերով որոնել և գտնել այն միջոցներն, որոնց գործադրութեամբ կարողանայ անգղիական եկեղեցին ամենուրեք թէ մոլար վարդապետութեանց և թէ ժողովրդոց մէջ արմատացած և արմատացող հասարակական և կրօնական—բարոյական չարեաց առաջն առնել և իւր հօտի մէջ հաստատուն պահել եկեղեցու վարդապետութիւնն ու քրիստոնէական բարոյականութիւնը: Առաջին ժողովը տեղի ունեցաւ 1867 թուականին և անցեալ տարի եղաւ երրորդ ժողովն, որ կազմուած էր 150 եպիսկոպոսներից, որոնք գումարուել էին Լոնդոնում բուն Անգղիայի վիճակներից, Ամերիկայի այլ և այլ պետութիւններից: Ասիս, Աֆրիկայի, ու Աւստրալիայի զնազան նահանգներից, ինչպէս և Ռվիկանական կղզիներից: Այս ժողովի որոշման և նշանակութեան Ռուսաց

Աշեան ՎԵՇՏԻԿԵ շաբաթաթերթը նուիրումէ ։ իւր վերջին № 52 ում մի յօդուած ։ յ-ը-է- հ-մ-ն-ի-չ-լ-ի-ն ժ-ը-լ- վերնագրով որոյ բավանդակութիւնն է. (Ներկայ ժամանակի եկեղեցական հասարակական պահանջների ընդհանուր մարդկասին բնաւորութիւնը պատերազմ ընդդեմ գլխաւոր երեւյթների հասարակական շարեաց՝ հարբեցողութեան և անբարյականութեան, Կիրակի օրերի սրբապահութիւն. եկեղեցական կրօնական կեանքի մակերևոյթը բարձրացնելու մասին ընդհանուր հոգաց-ղութիւն)։

Համոնդուիրական ժողովը քննութեան ենթարկեց եկեղեցական — կրօնական և հասարակական կեանքի շատ կողմերը, և որովհետեւ ժողովի անդամները ներկայացուցիչներ էին աշխարհիս բոլոր մասների, ուստի և նոցա քննութեան առարկայք կարող են համարվել նկարագիր ներկայ ժամանակի ընդհանուր եկեղեցական — հասարական վիճակի։ Մարդոց բնակարան — երեխրները կարող են լինել զանազան իրանց արտաքին բնաւորութեամբ, ըստ արդիւնաբերութեան և ըստ կլիմայի, բայց մարդն իւր էտական գծերով ամենուրեք մի և նոյնն է։ Ամենուրեք տիրապետող են նոյն մարդկային կրքերն, որոնց աստիճաններն են միայն տարրեր, և ամենուրեք նկաավում են մի և նոյն հակամիտութիւնք և արատք։ Ոյն վիճակն էր և ի հնումն երբ ազգերը համեմատաբար միմեանցից անջատեալ դրսւթեան մէջ էին, իսկ այժմ յարաբերութեանց անչափ դիւրսւթեան և մասնաւոր մոռաւոր հաղորդակցութեանց միջոցների պատճառութիւն, բոլոր ազգերը, ապրելով մի և նոյն տպաւորութեանց ներքոյ, ընդհանրապէս ներկայացնում են այնպիսի միակերպ բազմութիւն, որ մէկի փորձը գրեթէ ամբողջապէս գործադրելի է միւսի կեանքի համար և կարող է սօրա համար գործնական խրատ լինել։ Ժողովի ուշադրութիւնը գրաւող առաջին առարկան եղաւ այն մեծ հասարակական շարիքն, որ ծիւրում է ազգերի բարոյական և տնտեսական ուժերն, այն է արբեցութիւնը։ Այս շարիքը շատ զօրանում է ամեն երկիրներում և այն էրողութիւնն, որ ժողովն ամենից առաջ նորա վերայ գարձրեց իւր ուշքն ապացոյց է, թէ ոքան նա պատերազմն այդ շարեաց գէմ համարումէ անհրաժեշտ և անկետաձգելի։ Այս յարեաց ապահովութեան գլխաւոր պատճառ համարում է ժողովն ներկայ

աղքերի կեանքի մէջ բարոյական սկզբունքների նուազումն,  
մարդոց հակամիոտութիւնը դէպի նիւթական մարմնաւոր բա-  
ւականութիւնք, որովհետեւ արբեցողութիւնը հէնց մարմնաւոր  
մեղք է: Թէև ըստ որոշման յանձնաժողովի, որ մշակեց այդ  
խնդիրը, « արբեցողութիւնը մեղքերից ամենամեծը չէ, բայց  
գժուար է ժխտել, որ նա ամենակորստաբերն է: Եւ եկեղեցին  
տեսնելով նորա հասցրած չարիքն ու թշուառութիւնքը, չէ կա-  
րող անտարբեր հանդիսատես լինել և պարտական է որոնելու  
այն միջոցներն, որոց օգնութեամբ կարելի լինէր ներգործել յա-  
ջողութեամբ նորա դէմ»: Աերջին յիսուն տարիների փորձերը  
ցոյց տուին, որ այս չարիեաց դէմ պատերազմը հնարաւոր է և  
զանազան երկիրներում գործ դրված միջոցները արին արդիւ-  
նաւոր ներգործութիւն: Այս վերաբերութեամբ ժողովը մատ-  
նացոյց եղաւ « Գեւից ըմպելիւ զիմոնեցի ընկերունենաւ, կազմելու  
կարեսորութեան վերայ, որոնք գրաւելով յանդամակցութիւն  
իւրեանց աւելի պատուաւոր և աղդեցիկ անձանց, կարող են  
մեծ կշիռ տալ հասարակական կարծեաց ընդդէմ արբեցողու-  
թեան, այդ արատն աւելի ատելի անել ուրիշների աչքերում և  
իրանց անձնական օրինակով ազդել շրջապատողների վերայ,  
Բայց հնարաւոր են և ընդհանուր պետական միջոցների գործա-  
դրութիւնք այդ չարիքի դէմ: Որովհետեւ արբեցողութեամբ հարկ  
է ներգործել, ինչպէս և այլ մարմնաւոր արատների վերաբե-  
րութեամբ ընդհանրապէս—այսինքն հեռացնելով փորձութեան  
և գայթակղութեան առարկայքը: « Բոլոր մարմնաւոր գայ-  
թակղութեանց մէջ մեծ կշիռ ունի տարբերութիւնը թէ առ-  
ձեռն մօտիկ են գտանվում գայթակղութեանց և փորձութեանց  
առարկայք, թէ հեռու: Եթէ այս դէպքում մարդս թոյլ է:  
Նրան անկումից ազատելու միակ յոյսն է հեռու պահել նրանից  
գայթակղութեան առարկայն և նրան հեռու ոլահել վերջինից»:  
Այս հիման վերայ առաջարկուում են այնպիսի միջոցներ, որ-  
պիսիք են գնետների թուի նուազեցումն, ոգելից ըմպելիք վա-  
ճառելու ժամերի կրծատումն և արգելք տօն օրերին ըմպելիք  
վաճառել: Այս միջոցներից շատերն արդէն գործ են դնվում:

զանազան երկիրներում և այն ոչ առանց զգալի և իրական օգտի; Բայց ամենից աւելի ժողովը պնդումէ նոյն իսկ հասարակութեան բարոյական ինքնագործունեաւթեան վերայ և մանաւանդ եկեղեցական դասի, հրաւիրելով սրան, աւելի այն տեղերում, ուր այդ ախտը շատ տարածուած է, բոլորուն հրաժարուելու ոգելից ըմպելեաց գործածութիւնից, որովհետեւ այսպիսի խստութեան օրինակն ամենից աւելի ընդունակ է ազգելու թոյլերի չափաւորութեան վերայ; Բայց պատերազմն ախտի դէմ պէտք է մղել կրօնական հիման վերայ և ընդէւաց մէջ դաստիւրի ընէւրա-նէնի պէտք է կազմակերպուին եկեղեցական-կրօնական եղայրութեանց նման, որովհետեւ այս պատերազմն է հօգւոյ պատերազմ՝ մարմնոյ դէմ, և այդ պատերազմի կրօնական բնաւորութիւնն աւելի կամրազնդէ գործունէութեան հիմքն և բարի գործի ախոյեաններին կոգեորէ եռանդով; Ի միջի այլոց ժողովը զգուշացնում է մոլեռանդական գործողութիւններից և յանդիմանում է նրանց, որսնը իրանց եռանդի անչափաւորութեամբ հասան այնտեղ, որ մինչեսկ պահանջեցին ս. պատարագի մէջ էլ գինին փսխարիսել. այլ հեղանիւթով, համարելով նոյն իսկ գինին չարիք և ոչ սորա շարաչար գործադրութիւնը մարդկային թուլութեամբ; Այսպիսի մոլեռանդութիւնն, իբրև խանգարիչ նոյն իսկ պատերազմի սկզբանց ախտի դէմ, կարող է խախտել հաւատարման թիւնը դէպի բարի գործը, ուստի և պէտք է մերժուի, իբրև սիալական և վնասակար

Արբեցողութեան հետ սերտութեամբ կապուած է և մի այլ հասարակական ախտ, որ նոյնպէս շատ տարածուում է ամենուրէք և ազգերի կեանքի մէջ մոցնում է նեխուումն և ապականութիւնն; Այս է մարմնական ցանկութիւնն և առհասուրակ անբարոյականութիւնը: Նա էլ հետեւանք է ներկայ ազգերի հոգեկան ուժերի ընդհանուր թուլութեան, նիւթապաշտութեան տիրապետութեան, որ զօրեղ զէնքն է մարմնոյ պատերազմի մէջ հոգւոյ դէմ: Այս խնդիրը հետազօտելու համար կազմուած յանձնաժողովն, ենթարկելով այն բազմակողմանի և մանրակրկիտ քննութեան, ներկայացրեց ժողովին հաշիւ, որոյ

մէջ բացորսշ կերպով յայտնելով այդ չարեաց փակցուցիչ և աղականիչ զօրութիւնը ցոյց տուեց, որ այդ ախտը խախտումէ մարդուս բարոյական գոյութեան հիմնւնքը և ապականում է նորա մարմինն, որ տաճար է Ա. Հոգւոյն. մասնաժողովը աղահանջում է որ այդ ախտին անձնատուր եղողները չընդունուին քրիստոնէական հասարակութեան մէջ, բաղզում է ամուսնութեան սրբութիւնը ստորացնող ամեն ձգուման դէմ և յիշեցնում է: որ «Աստուծոյ բարկութիւնը, ինչպէս ո. Գրքում, նոյնպէս և պատմութեան մէջ, միշտ երեացել է այն աղդերի գէմ», որոնք պատուիրազանց են գոնուել բարուց մաքրութեան մէջ և առջաս սրակ ըստ համոզման մասնաժողովի, ուր միայն ամուսնութիւնը չունի բաւականաչափ յարգանք և սրբութիւն և մարմնայ ախտերի վերայ նայում են ներազամութեամբ, բնաւնեկան կեանքը խախտուում է և աղդը վաղ թէ ուշ ընկնում է և կորնցում է»: Ժողովը տուանձին ծանր ուշագրութիւն դարձրեց այս խնդրի վերայ և իւր հովուական շրջաբերականի մէջ հրաւիրում է ամենքին միացնել իրանց ուժերը բարեկամաբար պատերազմելու համար այս փակցուցիչ և ապականիչ ախտի գէմ և «յայտնել խաչակիր պատերազմ՝ այն մողքի գէմ», որ ամենից աւելի պղծում է քրիստոնէի մարմինն և ապականութիւն է մոցնում ո. Հոգւոյ տաճարի մէջ»:

Ժողովի կարծիքով անբարոյականութեան ախտի գէմ՝ պատերազմելու համար գլխաւոր միջոցը պէտք է լինի ներկոյ հասարակութեանց բարոյական մակերեւոյթի բարձրացնելն առհասարակ և ամուսնութեան սրբութեան զօրացումն, իրեւ եկեղեցական խորհրդի: Յայց այսուեղ ժողովը հարկից ստիպուած պիտի հանգիպի մի հասարակական երեւոյթի, որ հէնց այդ գործում ներգործում է հակառակ ուղղութեամբ: Այդ երեւոյթն է ներկայում ամենուրեք օրէնստուութեան մէջ նկատուող միտումն թլացնելու ամուսնական կեանքի կապերն և հեշտացնելու ապահարզանի եղանակները: Մի քանի պետութիւններում, ինչպէս զորօրինակ նրաննիայում, ապահարզանը, այն ևս յոյժապատ, գարձել է արդէն օրինական գործողութիւն: Յայց որովհետեւ այս երեւոյթն է միայն աշկարայ զիջողութիւն օրինաց

կողմից մարմնոյ պահանջներին, ժողովը իրան պարտաւոր համարեց ենթարկելու քննութեան եւ այս նշանաւոր ինդիրը: Ուստի և ժողովը խստութեամբ պնդում է ամուսնութեան սրբութեան և անքակտելիութեան վերայ, բայց պոռնկութեան պատճառից: Այս որոշման իրագործման համար ժողովն արգելում է եկեղեցականներին օրհնելու պսակն ամեն այն անձանց, որոնք բաժանուել են իրանց ամուսիններից ոչ պոռնկութեան այլ ուրիշ որեւէ պատճառով: Համանգլիական ժողովի այս որոշումներն աւելի նշանակութիւն և կշիռ են ստանում հենց նորա համար, որ երեւեցան այն ժամանակ, երբ մի փոքր ոլաւոն պետութեան մէջ կատարուեցաւ ընտանեկան անախորժ երեւոյթ, որ վերջացաւ ապօրինի ապահարզանով, որ ևս աւելի վնասակար է հասարակական և ժողովրդական բարոյականութեան, որովհետեւ այդ ապօրինութիւնը տեղի ունեցաւ թագաւորական գահի վերայ, բոլոր ազգի և աշխարհի աչքի առաջ: (Այս գեպը տեղի ունեցաւ Սերբիայում: ուր Միլան թագաւորն առանց օրինաւոր պատճառի բաժանուեցաւ իւր նատալիա ամուսնուց):

Այլ հասարակական հետաքրքրական խնդիրներից համանգիական ժողովը ի միջի այլոց քննութեան ենթարկեց և կիրակէի սրբապահանութիւնը: Պէտք է արդարութեամբ խոստավանել, որ Անդլուսաքսոնական ցեղն, աւելի քան այլ ազգերն, իւր առողջամտութեամբ գնահատած է կիրակուան հանգստութեան բարոյական և հասարակական նշանակութիւնը՝ ուստի և կիրակի օրն ոչ մի տեղ այնպէս սուրբ չէ պահուում, ինչպէս անգղիական ազգի կենդրոնատեղիներում: Բայց վերջին ժամանակ, երբ ձեռագործական եռանդն և անխոնջ վաճառաշահութիւնն զօրացան, անյագ ագահութիւնը արհեստաւորների և վաճառականների չքաշուեցաւ պղծելու և կիրակի աւուր սրբութիւնն, որովնախնական սովորութիւնն սկսաւ թուլանալ, որուն նպաստեց մասամբ և ազգի կրօնական-բարոյական գիտակցութեան նուազումն: Այս հանգամանքը շուտով գրաւեց բարի հնութեան նախանձախնդիրների ուշքն և զանազան երկիրներում սկսուեցաւ ջանքը վերականգնելու խախտուած սրբութիւնն:

թիւնը: Բնականաբար եւ համանգվիական ժողովը չդանդաղեց ասելու իւր հեղինակական խօպքն այս վերաբերութեամբ և նո հաստատութեամբ յայտնեց, որ անհրաժեշտ է պահպանել նախնի բարի սովորութիւնը: «Նիրակի օրուան սրբապահութիւնը, առած է ժողովի շրջաբերականում», իբրև հանգստեան, աստուածապաշտութեան և կրօնական ուսման օրուայ պահպանումն, ուղիղ յարաբերութիւն ունի և կապ քրիստոնէական հասարակութեան բարոյական բարօրութեան հետք: Մենք նկատեցինք վերջին ժամանակ աճող թուլութիւնն, որ սպառնում է այդ օրուան սուրբ բնաւորութեան: Մենք խստութեամբ յանդիմանում ենք այդ ձգտումն: Մենք յորդորում ենք հասարակութեան անզբազ դասակարգերին չխլելու ուրիշներից, իրանց անձնասիրութեամբ և շահամուլութեամբ, հանգստեան և կրօնի բարեյաջող ժամանակը: Խանութատէրերին և արհեստապետներին հրաւիրում ենք եռանդով պաշտպանել իրանց ծառայողների և մշակների այդ սրբազն իրաւունքը: Տէրունական օրը մեր ամենաաթանկագին ժառանգութիւնն է: Ով ի չարը գործ կդնէ այս ժառանգութիւնը, ընկնումէ խիստ և զարհուրելի պատասխանատութեան ներքոյ»: Այս խրատն ու յորդորը ամբողջապէս վերաբերելի է և մեր գործարանատէրերին ու խանութատէրերին, որոնք աւելի և աւելի նեղում են մշակ մարդոց կիրակուայ աշխատանքներով, զրկելով նրանց յաճախ միջոցից այցելելու Աստուծոյ տաճարն և աղատելով նրանց աշխատանքից հէնց այն ժամանակ միայն, երբ բացուում են գինետների և այլ այսպիսի բարեկարգական հաստատութեանց դռները:

Բոլոր այն և սոցա նման խնդիրներն, որոնք քննութեան առաւ ժողովն, ամենից լաւ կարող են վճռուել կրօնական-բարոյական կեանքի կանոնաւորուելովը, ուստի և ժողովն առանձնապէս ուշադրութիւն է դարձնում այս հանգամանքի վերայ: Նա ցանկանում է, որ կրօնի հիմունքը խորն և որոշակի տպաւորուեն ժողովրդի գիտակցութեան մէջ, ուստի և առանձին ուշադրութիւն դարձնում է այն միջոցների և եղանակների վերայ, որոնք կարող են հասցնել այս մեծ և ցանկալի նպատակին:

Սրան հասանելու համար եկեղեցականք և աշխարհականք պէտք է սերութեամբ միայնեն իրանց ուժերն և ամէնից առաջ ծնողաց սուրբ պարտականութիւնն է իրանց դաւակաց հաղորդել քրիստոնէական հաւատոի և բարոյականութեան սկզբունքները։ Կիրակի օրուան դպրոցները համարուում են զօրեղ միջոց առողջամիտ կրօնական-բարոյական սկզբունքների պահպանման և տարածման համար։ Սոցա մէջ ծխական քահանայի մասնակցութիւնն իբրև աշակերտաց խրատուուի և ուսուցչաց ղեկավարի, իբրև պարտականութիւն գնում է ժողովը քահանայի վերայ։ Սուրբ Գրոց ուսուումն իբրև գլխաւոր աղքէւր կրօնական-բարոյական գիտութեան համարուում է և ժողովը յայտնում է խորին ցաւ, որ վերջին ժամանակ աւելի լաւ գործի յարմար եռանդով բանապաշտ (բազիոնալիստ) մատենագիրներն և կրիտիկոսները ջանք են անում խախտելու հաւատը գէպի ոուրբ աղքիւրը հոգեւոր կինաց և նուազեցնելու դարաւոր յարգանքը գէպի Ա. Գիրքն, որ գերբնական յայտնութիւնն է ժողովը հրաւիրումէ եկեղեցականաց, համաձայն հօտի կարեաց, պաշտպանել Աստուծոյ խոսքը յորդակմանց դէմ, բայց չխորասուզիլ նոր տեսութեանց մանրամասն բացատրութեանց մէջ, որպէս զի չվրդովուի ու չպղորուի քրիստոնէից հաւատացող ինիշնը։ Այս գործունէութիւնն աւելի արդիւնաւոր և յաջող անելու համար, ժողովը կարեւոր համարեց կանոնաւորիւու վիճակների և ծխերի, եղիսկոպոսների և ստորին աստիճանի եկեղեցականաց փոխադարձ յարաբերութիւնն և սորահամարանի հրաժեշտեցած է համարում նույիրապետական կարգի մէջ աւելի խիստ հպատակութիւն պահպանել, յայտնելով, որ ծխական եկեղեցականաց աւելի ճիշգ և խիստ կախումն իրանց վիճակաւոր եպիսկոպոսից ազատ կպահէ եկեղեցին շատ ախուր աղմուկներից, որոնք յաճախ խանգարում են եկեղեցական-կրօնական կեանքի խաղաղ և կանոնաւոր ընթացքը։

Ինչպէս երեւում է վերոյիշեալներից, անգղիտական հասարակութեան եկեղեցական-կրօնական գործիչները մեծ ջանք գործ պիտի դնեն, որ պահանջում է բոլոր ուժերի լարումն։ Այսպիսի հանգամանքներում համանգիտական ժողովը չէր կարող

առանց ուշագրութեան թաղնել եւ այն տխուր երեսյին, որ զանազան կրօնական-բարոյական խառնակութեանց դէմ պատերազմի յաջողութիւնը ջլատուում է այն եկեղեցական-կրօնական բաժանմամբ, որ տիրապետում է թէ Անդղիայի մէջ և թէ այդ ցեղի բնակարան եղած այլ երկիրներում։ Կրօնի և բարոյականութեան նախանձախնդիր պաշտպանների գործը շատ կ'եշտանար, եթէ նոցա ուժերը չջլատուէին փոխադարձ վէճերով և ազանդաւորութեամբ, որպէս կրծում են եկեղեցական կերանքի հիմունքը։ Ուստի և ժողովը ջանք գործ գրեց այդ բաժանեալ ուժերը միացնելու համար, սրբան այն հնարաւոր է մեր ժամանակում և առաջարկեց ընդարձակ ծրագիր, որով նա հնարաւոր է համարում միացումն կատարեալ։ Սորս համար նա բաւորէան է համարում, որ անդղիական եպիսկոպոսական եկեղեցուց ոնչատեալներն ու այլակրօնները ընդունեն։ 1) Ս. Գիրքը—Հին և նոր ուխաի—իբրև կանոն հաւատոյ և բովանդակող իւր մէջ ամենայն, ինչ կարեւոր է փրկութեան համար. 2) Առաքելական հանգանակը մկրտութեան ժամանակ և Նիկիականը իբրև բաւարար բացարութիւն քրիստոնէական հաւատոյ. 3) անհրաժեշտ խորհուրդ ճանաչուեն մկրտութիւնն և հաղորդութիւնն իբրև Քրիստոսագիրք. և 4) պատմական յաջորդական եպիսկոպոսութիւնը։

Համանգլիական ժողովի մասնաժողովը քննելով մարդկութեան ներկայ վիճակն և գտնելով, որ ներկայումս ազգերն աւելի սերտ յարաբերութեան մէջ են միմեանց հետ, ուրեմն բնականաբար և մի ազգի, մասնաւանդ աւելի քաղաքակրթեալ ազգի, մէջ տարածուած ախտը հեշտութեամբ հաղորդուումէ միւս ազգերին էլ, հարկաւոր է համարում, որ ոչ միայն անդղիական եկեղեցին, այլ և միւս եկեղեցիք ևս միայնեն իրանց ուժերը համամարդկային ախտերի դէմ պատերազմելու համար։ Սորս համար մասնաժողովը առաջարկում է յարաբերաւթիւն ունենալ այլ եկեղեցեաց, մասնաւանդ արևելեան եկեղեցեաց հետ։

Յայտնի է որ անգղիական մասնաժողովի քննութեան առած ախաերը օրից օր զօրանում են և մեր ազգի մէջ։ Ո՞ր հայ մամուլի մէջ կարելի չէ գոնել գանգատ հայ ազգի օրից օր բարոյապէս ընկնելուն, նորա անտարբերութեան դէպի հասարակական գործերն և դէպի եկեղեցին, որ հայ հասարակութեան մէջ չէ նկատուում ամուսնական կապերի թուլանալը, գէթ մի քանի անհատների մէջ, որ հասարակութեան մէջ չէ լրսուում ծնողաց գանգատն իրանց զաւակաց ուղղութեան վերայ։ Բայց այս ամենի դէմ կանոնաւորապէս պատերազմ և նրանց առաջն առնելու համար ջանքեր չեն լինում, ուստի և այդ ախտերը բնականաբար պէտք է օրից օր զօրանան։ Ախտը եթէ յբժշկուի, աւելի կվարակուի։

Այլ թէ այդ ախտերը մտել են հայ ազգի մէջ։ Դա շատ բնական է։ Քանի որ հայ ազգն ինքն իր մէջ կենդրոնացած, օտարներից անջատ կեանք էր վարում, օտար ախտեր դժուար էին նորա մէջ մուտք գործում, բայց երբ հաղորդակցութեանց հեշտութեամբ և ժամանակի պահանջմամբ նա ոկտաւ սերտ կապ հաստատել օտար ազգերի հետ — բնականաբար նորա կեանքի մէջ պէտք է մուտք գործէին և նոցա թէ թերութիւնք և թէ առաւելութիւնք։ Մարդո ամեն տեղ մարդ է և այն թոյլ արարած, ենթարկուած զգայականութեան։ Քանի որ մենք Հայերս ստիպուած ենք և անհրաժեշտ հարկաւորութիւն ունենք օտարների հետ յարաբերութեան մէջ լինելու — նոցա ախտերը պէտք է մտնեն և մեր մէջ ու խախտեն մեր հասարական բարոյական հիմունքը։ Այդ վնասից ազատ մնալու համար մեզ կմնայ միայն ի գործ դնելու եւ այն միջոցներն նոցա դէմ, որ անգղիական մասնաժողովը որոշել է իւր ազգի մէջից վնասակար ախտերը արմատախիլ անելու համար։ Ուրեմն հայ ազգն ապագայ կատարեալ բարոյական անկումից և կորնչելուց ազատելու և նրան լաւ ապագայ պատրաստելու համար պէտք է եւ հայ եկեղեցականք ու աշխարհականք միացնեն իրանց ուժերը պատերազմի համար վնասակար հոգեկան և մարմնաւոր ախտերի դէմ։ Ծնողք առանձին ուշշք պիտի դարձնեն իրանց զաւակաց ի մանկութենէ բարոյականութեան սկզբունք

հաղորդելու թէ խօսքով և թէ օրինակով։ Դպրոցների հոգա-  
բարձուք, խնամակալք, կտությարիչք և ուսուցիչք, վոխտ-  
նակ անձնական և մասնաւոր ինստրիվների ասպարէզ անելու  
իրանց յանձնուած դպրոցները, պէտք է աշխատեն աւելի սոցա-  
մէջ ապահովուած հայ ապագայ սերնդի մուաւոր և բարոյական  
կրթութեան համար։ Եթէ մեր եկեղեցականք, ծնողք և հայ  
մանկուոյ կրթութեան աշխարհական պաշտօնեայք հոգ չտա-  
նեն իրանց պարագը ճշտութեամք և խղճի մոռք կատարելուն,  
մեր ապագայն կլինի բարոյական անկումն և կորուսու։ Խակ  
այդպիսի դէպքում պատասխանատուութիւնն այն անձանց,  
որոնց անհոգութեամք և անտարբերութեամք կտուժէ խեղճ  
ազգը—մեծ կլինի թէ Աստուծոյ և թէ պատմութեան տուած։  
Այս զարհութեական պատասխանատուութիւնը թող հայ եկեղե-  
ցականաց և աշխարհականաց մուածման առարկայ գառնայ և  
զգաստանան, քանի որ գեռ ուշ չէ։

## ՊԱՏՄԱԿԱՆ

. . . . ԽԺԱԳԵՐ ՏԵՐ,

Հայք Ինքնավարսթենէ զրկուելուց 400 տարի յետոյ յաւարտ 18րդ  
դարու երր արդէն ենթարկուած էին ազգի ազգի տանջանաց : . . , երբ  
Օսմանեան կառավարութիւնը նոր սկսեր էր ձեռն կարկառել Հայաստանի  
այդ հեռաւոր գաւառուաց վրայ, դարձեալ պարսից և ոռուաց հետ անդադար  
պատերազմներու միջոցին քիւրդ տեղակալ պէյերու և գունդագունդ աւա-  
զակաց խմբերու ձեռք որպես համրիչ կը գառնային. մինչ ցթանդիմաթի  
հաստատութիւնը, որ հետզիւտէ նոցա առաջքն առաւ, հայքն աղասելով  
իրենց նախկին անտանելի վիճակէն, որ ըստ կարեաց ձեռն արդի գրել որ  
ժամանակի տգիտութեան առմիւ դուրս է մնացած նոր պատմութեան տե-  
սութիւնից։

Որին թէպէտե չկրցայ այն կենդանի գոյնն ու նկարը տալ՝ որպէս  
պարտ ու պատշաճն էր, բայց և այնպէս «Նկարագիր Ս. Յովհաննու վտ-  
նուց և վիճակին նորին Բագրեւանդայ» անուն վերնագրով պատմական յօ-  
դուածն իւր հետաքրքրական բովանդակութեամբն ևս ոչ նուազ լոյս պիտի